

ԼԵՈՅԻ ՀՈԴՎԱԾԱՇԱՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԺԽՏԵԼՈՒ ԹՈՒՐՔԵՐԻ ՓՈՐՁԵՐԻ ԴԵՍ
(Ծննդյան 150-ամյակի առթիվ)

Հայ գրող և գրականագետ, մեծ պատմաբան ու հրապարակախոս Լեոն՝ Առաքել Բաբախանյանը (1860–1932), XIX դարավերջին և XX դարի առաջին երեսնամյակում ստեղծագործական բուռն կյանք ապրեց: Լեոյի գործունեությունը բաժանվել է երկու հիմնական ժամանակաշրջանի՝ մինչխորհրդային և խորհրդային:



Հայոց պատմության երախտավորը գրել ու իր պատմագիտական աշխատությունների մեծ մասը հրատարակել է մինչխորհրդային տարիներին («Հայկական տպագրություն» «Ստեփանոս Նազարյանց» «Հովսեփ կաթողիկոս Արղության» «Գրիգոր Արծրունի» «Ս. Մեսրոպ» «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի» «Հայոց հարցի վավերագրերը» «Գլադստոն» «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» «Հայոց պատմություն» եռահատորը և այլն):

Մեծ հետաքրքրությամբ են կարդացվում Արևելյան ճգնաժամին և Հայկական հարցին նվիրված Լեոյի այն ուսումնասիրությունները, որոնցում նա քաղաքական հայագիտության դիրքերից լուսաբանել է միջազգային իրադրության, Թուրքիայի ներքին ու արտաքին կացության հանգուցային հիմնահարցերը, Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական խարդավանքները: Հատկանշական է, որ այդ թեմային նվիրված նրա աշխատություններն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը: Լեո հրապարակախոսն ուներ պատմաքննական երգիծանքի մեծ կարողություն և հատկապես անխնա էր կեղծարարների դեմ բանավիճելիս: Նման ոճական ուղղվածությամբ է նա շարադրել նաև Հայ ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովրդի Չայն» թերթի 1918 թ. վերջերի մի քանի համարներում տպագրած «Թուրք կառավարությունը և հայ հեղափոխականները» վերնագրով հոդվածաշարը, ուր մերկացվում է երիտթուրքերի գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, փաստերի և մտքերի կուռ տրամաբանությամբ ոչնչացնող քննադատության ենթարկում ոճագործությունը սատարող կեղծարարներին:

Ո՛րն էր սույն հոդվածաշարը գրելու շարժառիթը: Իրողությունն այն է, որ Մեծ եղեռնից հետո՝ 1917 թ., թուրքերը «հեռատեսորեն» ֆրանսերենով Կ. Պոլսում հրատարակել էին «Հայկական կոմիտեների ձգտումներն ու հեղափոխական գործողությունները Օսմանյան Սահմանադրության հրատարակումից առաջ և հետո» վերնագրով մի գիրք: Հայտնի

է, որ Հայոց ցեղասպանությունը թուրքերն իրագործեցին պետական-ազգային քաղաքականության մակարդակով, նախօրոք և խնամքով ծրագրված, դրա հիմնավորման, այսինքն՝ «արդարացման» համար առաջ քաշելով զանազան դրույթներ: Ահա, սույն գրքում թուրքերն «աշխատել են» իրենց ապահովագրել ապագա պատասխանատվությունից ու մեղադրանքներից, ժխտել Մեծ եղեռնը՝ դրա ողջ մեղքը բարդելով հայերի վրա, իսկ իրենց «պատասխան գործողությունները» համարել միայն ու միայն «ինքնապաշտպանության» և պետական շահերով արված տեղահանության արդյունք: Լեոն համոզիչ փաստերով հիմնավորապես հերքում է թուրքերի առաջ քաշած և հայերին ուղղված բոլոր «մեղադրանքները»: Դառը կշտամբանքով է նա խոսում նաև հայ հեղափոխական կոմիտեների գործունեության մասին, ցույց տալիս, որ նրանք չունեին իրականության սթափ զգացողություն:

Պատմաբանի եզրակացությունն այս է. «Թուրք կառավարության հրատարակած այս հատորը շատ հետաքրքրական է իր բովանդակությամբ և մանավանդ իր մթերած վավերագրերով: Նա մի շատ թանկագին աղբյուր կդառնա պատմության համար: Կարևորն այն է, որ թուրք կառավարությունն ասել է ամեն ինչ, և այսուհետև հազիվ թե ուրիշ ասելիք ունենա»¹:

Հրապարակելով շուրջ 100 տարի առաջ Լեոյի գրած այս հոդվածաշարը, ցանկանում ենք, որ բոլորս հասկանանք հետևյալ պարզ իրողությունը. թուրքական ներկայիս իշխանությունները չեն հրաժարվում մարդկության դեմ երիտթուրքերի գործած հանցագործությունից, չեն հրաժարվում իրենց նախորդների ժառանգությունից և շարունակում են նրանց քաղաքականությունը հայ ժողովրդի հանդեպ, այսինքն՝ նրանք երիտթուրքերի իսկական իրավահաջորդն են: Ասվածի խոսուն վկայությունն է նաև Թուրքիայի ներկայիս վարչապետ Ռեջեփ Էրդողանի 2009 թ. սեպտեմբերի 19-ին Ստամբուլում մամուլի ասուլիսի ժամանակ արած հետևյալ հստակ հայտարարությունը. «Մեր նպատակն է ... ժամանակակից Թուրքիային վերադարձնել Օսմանյան կայսրության հզորությունը: Կարծում եմ, մենք այդ նպատակին կհասնենք»²:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

¹ Ի դեպ, 1918 թ. Վաշինգտոնի նախկին թուրքական դեսպան Ահմեդ Ռուստեմ բեյը Բեռնում այդ նույն նպատակով հրատարակել էր «Համաշխարհային պատերազմը և հայ-տաճկական հարցը» վերնագրով գրքույկը: Հայ գրական, հասարակական - քաղաքական գործիչ Տիգրան Հովհաննիսյանը Թիֆլիսում լույս տեսնող «Հառաջ» թերթի 1919 թ. փետրվար-մարտի մի քանի համարներում անդրադարձել է Հայոց ցեղասպանությունը ժխտել փորձող վերոհիշյալ երկու հրատարակություններին և հիմնավոր, փաստարկված, մասնագիտական հետազոտում և խորությամբ բացահայտել թուրք կեղծարարների նպատակը (մանրամասն տե՛ս Ա ն. Զ ա ք ա ր յ ա ն. Տիգրան Հովհաննիսյանը Հայոց ցեղասպանությունը ժխտող թուրք կեղծարարների դեմ. - ՊԲՀ, 2006, №3, էջ 250-275: Տ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Տաճիկ կառավարությունը և իթթիհաթը մարդկության դատարանի առաջ: Կազմեց և հրատարակության պատրաստեց Անուշավան Զաքարյանը, Երևան, 2007, էջ 5-41):

² Տե՛ս Էրդողան. Մեր նպատակն է՝ վերադարձնել Օսմանյան կայսրության հզորությունը. - <http://www.panarmenian.net/arm/word/news/36460>; Эрдоган: Наша цель – вернуть могущество Османской империи. - <http://www.hayinfo.ru/ru/news/world/65211.html>:

ԹՈՒՐԲ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

I

1915 թվականի ապրիլի 11/24-ը արյունով պիտի դրոշմվի հայկական տարեգրությունների մեջ: Այս օրից էր, որ թուրքաց կառավարությունն սկսեց գործադրել Ասիական Թուրքիայի հայությունը բնաջնջելու իր ծրագիրը, որ կազմել էր դեռ 1914-ի օգոստոսից, երբ հանկարծակի բռնկած եվրոպական պատերազմի հետևանքով, ընդհանուր զինակոչ էր հայտարարել:

Տեղահանություն — այսպես էր այդ ծրագրի պաշտոնական անունը: Հայտնի է, թե ինչպես կատարվեց այդ տեղահանությունը, ինչպես հայերն ամեն տեղից — Տրապիզոնից, Էրզրումից, Փոքր Ասիայի բոլոր հայաբնակ տեղերից դուրս հանվեցին և քշվեցին դեպի Միջագետք, դեպի Միջիայի անապատները:

Այս կոտորածի մի նոր տեսակ էր և այնքան սարսափելի, որ հարյուր հազարավոր գոհերի աղաղակները խեղդված չմնացին Թուրքիայի սահմանների մեջ, որոնք թեև պինդ փակված էին պատերազմի պատճառով, բայց և այդպես, քաղաքակիրթ աշխարհը լսեց այդ աղաղակները և սոսկաց, թեև ինքն էլ գտնվում էր նմանը չունեցող պատերազմի սուսկումների մեջ: Սպանվածները հարյուր հազարներով էին հաշվում, սարսափները նկարագրել են շատ չեզոք եվրոպացիներ և ամերիկացիներ, նույնիսկ և թուրքերի դաշնակից գերմանացիները:

Ուղիղ մի ամիս անցած, մայիսի 24-ին (ն. տ.), «Հավասի» գործակալությունը հրատարակում էր հետևյալ հաղորդագրությունը.

«Տրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը համաձայնության են եկել հրատարակելու համար հետևյալ դեկլարացիան.

«Շուրջ մի ամսից ի վեր Հայաստանի քուրդ և թուրք ազգաբնակչությունը կատարում է, օսմանյան իշխանությունների թույլտվությամբ, հաճախ նաև օգնությամբ, հայերի կոտորածներ: Այսպիսի կոտորածներ տեղի են ունեցել մոտավորապես ապրիլի կեսին Էրզրումի, Դերջանի, Ակնի, Բիթլիսի, Մուշի, Սասունի, Ջեյթունի և ամբողջ Կիլիկիայի մեջ: Վանի շրջակայքի մի քանի գյուղերի բնակիչներն ամբողջովին կոտորված են և հայոց թաղն էլ պաշարված է քրդերով: Միաժամանակ Կ. Պոլսում օսմանյան կառավարությունը դաժանաբար է վարվում անպաշտպան հայ ազգաբնակչության հետ: Թուրքիայի այս նոր ոճիրների հանդեպ, որոնք կատարվում են քաղաքակրթության դեմ, դաշնակից կառավարությունները հրապարակավ գիտնալ են տալիս Բ. Դոան, թե իրանք անձնապես պատասխանատու պիտի համարեն այս ոճիրների համար օսմանյան կառավարության բոլոր անդամներին, նույնպես և նրա բոլոր այն գործակալներին, որոնք խառնված կլինեն այդպիսի կոտորածների մեջ»:

Պատասխանելով այս հաղորդագրության, թուրք կառավարությունը ամենադրական կերպով հայտարարում էր, թե ոչ մի կոտորած տեղի չի ունեցել Թուրքիայում: Հայերի վերաբերմամբ կառավարությունն ստիպված է եղել ձեռք առնել ինքնապաշտպանության միջոցներ, տեղահան անելով նրանց, այսինքն՝ տեղափոխելով նրանց

բնակության ուրիշ վայրեր, քանի որ հայերը ցույց են տվել իրանց բացարձակ անհավատարմությունը դեպի Թուրքիան, մի հանգամանք, որ մեծ վտանգ է ներկայացնում այժմյան պատերազմի մեջ: Դրա հետ միասին թուրք կառավարությունն ասում էր, թե իր ձեռքին կան վավերագրեր, որոնք ապացուցում են, թե հայերն ապստամբական շարժումներ սկսել են ռուսաց, ֆրանսիական և բրիտանական կառավարությունների թելադրանքով:

«Բ. Դուրը, – ասում էր նա, – պատեհ ժամանակում կհրատարակե այս բոլոր վավերագրերը մանրամասնաբար՝ հասարակական կարծիքը լուսավորելու համար»:

Ահա այս խոստումը թուրք կառավարությունը կատարեց անցյալ տարի, հրատարակելով Կ. Պոլսում ֆրանսերեն լեզվով մի ամբողջ հատոր, որի վերնագիրը հետևյալն է. «*Aspirations et agissements révolutionnaires des Comités Arméniens avant et après la proclamation de la Constitution Ottomane*» («Հայկական կոմիտեների ձգտումներն ու հեղափոխական գործողությունները Օսմանյան Սահմանադրության հրատարակումից առաջ և հետո»):

Թեև գրքի մեջ ոչ մի հիշատակություն չկա թե հրատարակությունը օսմանյան կառավարությանն է պատկանում, բայց բոլոր հանգամանքները ապացուցում են, որ դա մի մասնավոր հրատարակություն չէ: Առաջին այն, որ ամբողջ ժամանակ խոսողը «կայսերական կառավարությունն» է, որ փաստեր հանում է կատարված խուզարկություններից, որ ձեռքի տակ ունի տեղական իշխանությունների պաշտոնական զեկուցումները: Երկրորդ՝ տպագրության հանգամանքներն անգամ պարզ վկայություն են, որ ներկա ժամանակներում միայն մի կառավարություն կարող էր այդպիսի հրատարակչական միջոցների տեր լինել: Գիրքը տպված է շատ մաքուր, հաստ ու ողորկ թղթի վրա, որ մասնավոր մարդկանց համար միանգամայն անգոյուտ մի բան է: Հատորը ունի իր մեջ 416 էրես իբրև բնագիր և 146 էրես իբրև հավելված, ուր զետեղված են վավերագրերի (գրություններ, կենդանագիրներ, պատկերներ և այլն) նմանահանությունները, թվով 122 հատ: Գիրքը, ինչպես երևում է, վաճառելու համար չէ տպագրված և նրա վրա որևէ գին չէ նշանակված: Մի վերջին մանրամասնություն ևս. – ցույց է տրված միայն տպագրության տեղը, իսկ թե ինչ տպարանում է տպված – հայտնի չէ:

Մենք միանգամայն անհրաժեշտ համարեցինք ճշտել այս հրատարակության պաշտոնական հանգամանք ունենալը: Միայն նախկին թուրք կառավարությունը կարող էր հետաքրքրված լինել այսպիսի մի հրատարակություն կատարելու: Եվ միայն այն դեպքում, երբ մեզ ամենքիս համար անհասկանալի է դառնում այս հանգամանքը, միայն այս դեպքում հրատարակությունը դառնում է չափազանց հետաքրքրական և ուսանելի:

Հասկանալի է, թե ինչու: Հայության բնաջնջումը Ասիական Թուրքիայում հենց սկզբից ևեթ մի մեծ գրականություն ստեղծեց Եվրոպայում և Ամերիկայում: Գրություններ, նույնիսկ գրքեր երևացել են բոլոր լեզուներով և գերմաներենը բացառություն չէ կազմում, թեև գերմանացիները թուրքերի դաշնակիցներն էին: Այսպես, Լիբկնեխտը կրակոտ հարցապնդումներ էր անում ռայխստագում, իսկ հայտնի

հայասեր դոկտոր Լեյսիուսը մինչև իսկ գնաց Պոլիս՝ Էնվեր փաշային անձամբ բողոք ներկայացնելու և համոզելու, որ դադարեցվի հայերի բնաջնջումը: Վկաների, չեզոք, չշահագրգռված վկաների պակասություն չունի հայ ժողովուրդը: Անգլիական կառավարությունը հրատարակել է «Կապույտ գրքի» մի ամբողջ ստվար հատորը, որի մեջ հարյուրավոր վկայություններ են տալիս գերմանացի, ամերիկացի, իտալացի (այն ժամանակ ոչ Ամերիկյան և ոչ Իտալիան չէին մասնակցում պատերազմին) և ուրիշ ազգություններին պատկանող ականատեսների ցուցմունքները:

Արդ, եթե դատաստան լինի, այս ականատեսներն ու վկաները շատ բավական կլինեն մեծ ոճիրը ապացուցելու համար: Նախկին թուրք կառավարությունը կարծես զգալով, որ պատասխանատվության օր պիտի գա, իրան արդարացնում է ոչ միայն իր լեզվով խոսելով, այլև վավերագրեր ներկայացնելով:

Եվ ահագին կարևորություն ունեցող հարց է առաջանում.— ի՞նչ է ասում թուրքական այդ հրատարակությունը, ի՞նչ է ապացուցանում նա իր երկար բացատրություններով ու հարյուրավոր վավերագրերով:

Գիրքը արտաքուստ թողնում է լուրջ ու ծանրակշիռ գործի տպավորություն: Ազդու են մանավանդ բազմաթիվ, իրար հաջորդող, նմանահան պատկերները, երբ դուք թերթելով անցնում եք հատորն սկզբից մինչև վերջ: Բայց բոլորովին հակառակ տպավորություն եք ստանում, երբ ուշադրությամբ, ծայրեծայր կարդում եք թուրք կառավարիչ մարմինների գրականությունը: Ձեր առջև բացվում է մի բյուրոկրատական կառուցվածք, ուր դուք տեսնում եք բազմաթիվ ծակուծուկեր, նրբանցքներ և միամտորեն, ուղղակի անշնորհք կերպով փորված աղվեսային անցքեր ու փոսեր, որոնք բոլորը տանում են դեպի մի ընդհանուր նպատակ — ապացուցել, թե հայերը ամենագարշելի ազգն են և օսմանյան հայրախնամ կառավարությունը նահատակների նահատակն է այդ գարշելի, ապերախտ, դավաճան ազգի ձեռքին:

Դուք տեսնում եք, թե ինչպես է կատարվել այդ ապացուցումը: Բարձր թոնչքի մի բյուրոկրատ հանձնարարել է իրանից ցած թռչող մի ուրիշ բյուրոկրատի հավատացնել ամբողջ աշխարհը, թե հայերը ոչ անցյալում և ոչ ներկայում ոչինչ առիթ չունեին դժգոհ լինելու օսմանյան կառավարությունից: Սկզբից նեթ նրանք վայելում էին ամենայն բարիքներ Թուրքիայում: Առևտուրը ամբողջովին նրանց ձեռքում էր, երկրագործության մեջ ոչ ոք նրանց չէր խանգարում: Հարստանում էին նրանք, բարեկեցության բարձր աստիճաններին հասնում: Հայերին ոչ ոք չէ նեղացրել Թուրքիայում և ոչ մի անգամ, թե պատմական անցյալում, թե նույնիսկ մինչև ներկա օրերը: Ընդհակառակը, նրանք էին շարունակ ուրիշներին նեղացնում: Հարստահարում, կոտորում էին մուսուլմաններին: Բայց նրանց ամենադժբախտ զոհը մասնավորապես թուրքաց կառավարությունն էր, սկսած այն ժամանակից, երբ նրանք որոշեցին անկախ Հայաստան ստեղծել Թուրքիայի փլատակների վրա և այդ նպատակով հիմնեցին հեղափոխական կոմիտեներ: Կոմիտե էին ոչ միայն կառավարության, այլև առհասարակ մուսուլման ազգաբնակչության դեմ:

Երբ օսմանյան սահմանադրությունը հրատարակվեց, կոմիտեները հայտարարեցին, թե այնուհետև իրանք թողնելու են քաղաքական և հեղափոխական գործունեությունը և խաղաղ աշխատանքով պիտի զբաղվեն... Բայց այդպես չեղավ: Եռյակ համաձայնության ոսկով կաշաված, նրանք շարունակեցին նույն ձգտումը ցույց տալ, այն է՝ անկախ Հայաստան ստեղծել և դրա համար կրճտել Թուրքիան: Այս անգամ կոմիտեներն ավելի մեծ եռանդով սկսեցին զինել հայերին և ռուսների ամբողջ պահեստներ կազմել: Իսկ երբ Թուրքիան 1914-ին մտավ ընդհանուր եվրոպական պատերազմի մեջ, հեղափոխական կոմիտեները Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմն անցան, նրանց գործակալների դրդումով ապստամբություն բարձրացրին Թուրքիայի ամբողջ հայության մեջ: Կայսերական կառավարությունը շատ նեղ դրության մեջ էր ընկել: Հայկական ապստամբությունն սպառնում էր մեծամեծ բարդություններ ստեղծել թուրքական բանակի թիկունքում, վտանգ էր ստեղծում նաև մուսուլման ազգաբնակչության համար: Եվ որովհետև յուրաքանչյուր անկախ պետության իրավունքն ու պարտավորությունն է ամեն միջոցներ ձեռք առնել իր պետական գոյությունն ապահովելու համար, ուստի թուրք կառավարությունն էլ վճռեց, ապստամբության մեջ գտնվող հայությունն անվնաս դարձնելու համար, տեղափոխել նրան բնակչության ուրիշ վայրեր: Այս կարգադրությունն էլ գործադրվել սկսեցին կանոնավոր կերպով: Այս է այն ամենը, ինչ տեղի է ունեցել Թուրքիայում:

Ծրագիրը, հանձնարարության էությունը — ահա: Եվ նրան պիտի զարգացներ ու փաստաբաններ թուրքական բյուրոկրատիան իր ձեռքի տակ եղած նյութերի և վավերագրերի միջոցով:

Իսկապես էլ այս է ամբողջ գրքի ձգտումն առաջին տողից սկսած մինչև վերջինը:

Լրագրական փոքրիկ էջերը մեզ թույլ չեն տալիս երկարորեն ապացույցներով հաստատել, որքան թեև հայության շահերի տեսակետից շատ կարևոր էր, որ այս գրքի և ոչ մի երեսն էլ չմնար առանց հերքման... Մենք միայն մի քանի նմուշներ կբերենք: Եվ սրա համար կբաժանենք ամբողջ գիրքը երեք մասի. 1) Մինչև թուրքական սահմանադրությունը (1908 թ.), 2) Սահմանադրությունից մինչև եվրոպական պատերազմը և 3) Պատերազմի առաջին տարին:

«Ժողովրդի Չայն» 7. XI. 1918, № 54:

II

Նախընթաց բացատրություններից կարելի է գալ այն եզրակացության, թե թուրք կառավարությունը մեղադրում է միայն հեղափոխական կոմիտեները, թե նա, այդպիսով, զանազանություն է դնում հայ ժողովրդի հասարակական զանգվածի և նրա ծոցում գոյացած առանձին մարմինների մեջ:

Այս կլիներ միակ ուղիղ ճանապարհը, բայց այդ ճանապարհով թուրք կառավարությունը չէր գնա դեպի արդարացում, այլ բոլորովին դեպի հակառակը, դեպի դատապարտություն: Եվ ահա նա սկզբից նեթ բացատրում է, թե ինչ են հեղափոխական կոմիտեները:

Ամենքը գիտեն, որ քաղաքական ծրագրով կազմված հայկական կոմիտեները չորս հատ են. «Հնչակ» «Դաշնակցություն» «Վերակազմյալ Հնչակ» և «Ռամկավար»: Մրանք հեղափոխական են *par excellence*, բացարձակորեն: Բայց եղել են և կան նաև մի շարք ծպտյալ, դիմակավոր կոմիտեներ: Մրանք են. «Բարեգործական» «Արարատյան» «Արևելյան» «Դպրոցասիրաց» «Միացյալ» ընկերությունները, որոնք արտաքուստ ծառայում էին իբր թե հայ ժողովրդի բարեկեցության, բայց ներքուստ ոչ մի բանով չէին տարբերվում իսկական և զուտ հեղափոխական կոմիտեներից: Այս կոմիտեների պատճառած հեղափոխական չարիքը դեռ ավելի մեծ է, քան Հնչակյան և Դաշնակցական կոմիտեներինը: Նրանք էին, որ դպրոցներ բաց արին ամեն տեղ և ավանդեցին այդ դպրոցների մեջ հայոց պատմություն, որ և ցույց էր տալիս ամենքին, թե Հայաստանը պիտի լինի անկախ:

Հեղափոխական գործ կատարում էին ոչ միայն Հնչակը, Դաշնակը, Միացյալը, Ռամկավարը: Հեղափոխական կոմիտե էր հայոց ամբողջ հին անցյալը, սկսած առասպելական Հայկ Նահապետից:

Բաց արեք վավերագրերի նմանահանությունների 47-րդ երեսը: Այդտեղ կտեսնեք, իբրև անհերքելի ապացույց հայ հեղափոխական ապստամբականության, անհերթ զատկերը աղեղնավոր Հայկ Նահապետի: Դա № 30 վավերագիրն է և նրա տակ դրված է վերին աստիճանի ահեղ մի հայտնագործում. «Գտնված է հայկական մի նախակրթական դպրոցում»:

Բացե՛ք այնուհետև 62 երեսը, որ № 41 վավերագիրն է: Հայ հին թագավորների և պատմական գործիչների պատկերներն են, նման այն պատկերների, որոնք «Փառք Հայաստանի» վերնագրի տակ մի ժամանակ, ցարական կատաղի հալածանքների ժամանակ, տպված էին Մոսկվայում և սաստիկ տարածված էին հայերի մեջ, զարդարելով մինչև իսկ գինետների պատերը: Առանձին երեսի վրա թուրք կառավարությունը մանրամասն թվել է, թե ովքեր են այդ պատկերների մեջ ներկայացված սարսափելի հայերը: Ահա այդ ցուցակը. «1. Հայկ թագավոր. — 2. Արամ թագավոր. — 3. Պարույր թագավոր. — 4. Վաղարշակ Արծրունի (?) թագավոր. — 5. Արտաշես I թագավոր. — 6. Տիգրան I Մեծ թագավոր. — 7. Աբգար թագավոր. — 8. Վռամշապուհ թագավոր. — 9. Ռուբեն, Կիլիկիայի իշխան. — 10. Վահան գորավար Մ-յան. — 11. Վարդան գորավար Մ-յան. — 12. Լևոն թագավոր Լուսինյան. — 13. Լևոն թագավոր Ռուբինյան. — 14. Սմբատ թագավոր Շահինշահ II. — 15. Աշոտ II թագավոր. — 16. Աշոտ I թագավոր Բագրատունի. — 17. Տիգրան թագավոր Երվանդյան. — 18. Սուրբ Մահակ Պարթև. — 19. Սուրբ Մեսրոպ, հայ տառերի հնարող. — 20. Մայր հայրենիք. — 21. Հայկական զինանշան. — 22. Էջմիածին. — 23. Անի, հայ թագավորների մայրաքաղաք:

Բայց այս միայն մեկն է այս տեսակ ապացույցներից: Մինչդեռ թուրք կառավարությունն ունի ուրիշ նմանօրինակ վավերագրերի մի ամբողջ կույտ ևս: Ո՛ւմ հայտնի չէ «Ոգի Հայաստանի» անունով պատկերը, որ նկարվեց ու տպագրվեց Փարիզում 1860-ական թվականների սկզբում և այնուհետև անթիվ անգամ նկարվել ու տպագրվել է ամեն տեղ: Բավական է ասել հենց այն միայն, որ ավերակների մեջ նստած այդ կնոջ պատկերը մի ժամանակ, նույնիսկ Արդուլ Հա-

միդի ժամանակ, տպվում էր Կ.Պոլսում հրատարակվող հայերեն գրքերի վրա: Այժմ այդ հանրաժանոթ, վաղուց արդեն քաջքշուկ դարձած պատկերն է մտել թուրք կառավարության «դոքյումանների» մեջ: Այս միևնույն նկարը մի ինչ-որ Քիրեճճյան վերցրել է և պապիրոսի թղթի երես է դարձրել, տպելով նրա վրա. «Հիշատակ Հայաստանի սիկառի թուղթ, կեղրոնատեղի Ոսկեան Քերեճճյան, Մահմուդ Բաշա, Մանասթըր խան»: Այս վերտառություններով էլ ավերակների մեջ նստած կինը նորից բազմել է «վավերագրերի» շարքում՝ ցույց տալու համար, թե նույնիսկ թուղթ ծախողներին էլ հեղափոխականացնում էր նա:

Կա, ինչպես գիտեք, նույնքան մի հին նկար, որ կոչվում է «Մանուկ Հայաստան»: Մի կին իր երեխային ցույց է տալիս Մասիսը, Էջմիածինը, իսկ նրա առջև ցրված են ավերակների բեկորներ, որոնց վրա գրված են զանազան հին քաղաքների անուններ՝ «Դվին» «Արտաշատ» «Անի» և այլն: Այս պատկերն էլ է ցուցակագրված վավերագրերի մեջ իբրև ապացույց, որ Հայաստանի անկախությունն են պահանջում հայերը:

Մի խոսքով ամեն ինչ, որ հայի անցյալն է հիշեցնում, կատարելապես հեղափոխական և անջատական հանցանք է ներկայացնում թուրք կառավարության աչքին: Նույնիսկ Գրիգոր Վարդանյանի «Պատմական Հայաստան» անունով մեծ քարտեզը նույնպես դրված է վավերագրերի մեջ:

Դավադրական է և հայի ամեն մի հայրենական զգացմունքը: Ազատ Ամերիկայում Համազասպ վարդապետը հրատարակել է մի պատկեր, որի բովանդակությունը հետևյալն է. Բարձր մի սար, ստորոտում մի վանք և գետ: Երևում են ավերակներ, մի կողմում մարդկային ոսկորների մի կույտ: Մի կին է նստած. նրա ծնկան գլուխը դրած քնած է մի երեխա: Չորս կողմում թափված են քնար, գիրք, խաչ, սուր և այլ իրեր: Պատկերի տակ հայերեն մի ոտանավոր է, որի ֆրանսերեն թարգմանությունն է տալիս թուրք կառավարությունը: Այսպես է նրա բովանդակությունը. «Բաց գեղեցիկ աչքերդ, իմ զավակ. դու շատ քնեցիր քո մոր ծնկան վրա: Իմ հողանի թները փայտացել են, ես այլևս ուժ չունեմ քեզ օրորելու, ես լալիս եմ: Քո քունը երկարեցավ, Մայկակ (Հայկակ?), իմ հերոս, լուսինն, արևը քեզ տեսնում են և ժպտում և իրենց շողերը նետում են ճակատիդ, հեղեղում են քո սիրուն թշերն իրանց փայլուն լույսով: Չարթի՛ր, նայի՛ր Մասիսին, տես ամպերը ձյունի թագ են հյուսել նրա ճակատին: Եվ տաճարների ավերակները լողում են արյան հեղեղների մեջ, որոնք հոսում են նրանց ոտների մոտ»: Այս էլ նշանակում է անկախություն և ապստամբություն: Թուրքն ուր որ արյան խոսք է լսում, հասկանում է, որ անպատճառ իր դեմ են խոսում:

Անջատական հանցանքների թվում է հայերեն տառերով քարտեզ ունենալը: Եվրոպայի Հայ Ուսանողական Միության հրատարակած «Հայաստան և հարևան երկիրներ» քարտեզն էլ դրված է ապացույցների մեջ, ինչպես նաև Վանի վիլայեթի գեղեցիկ քարտեզը, տպված կտավի վրա, Վանի հատակագծի հետ միասին:

Մի ժամանակ Վենետիկի Մխիթարյանները նամակադրոշմների ձևով հրատարակեցին հայ գործիչների պատկերները: Դրանք էլ

ահա փայլում են թուրքական ապացույցների մեջ. Ադամյան, Աբովյան, Ստեփանոս Նազարյան, Ալիշան, Լոռիս-Մելիքով, Տեր-Ղուկասով, որոնց մասին ծանոթություն կա, թե դրանք մասնակցում էին 1877-ի ռուս-թուրքական պատերազմին, Պեշիկթաշյան, Ռաֆֆի (որին հաճախ այս գրքի մեջ տրվում է «հեղափոխական» տիտղոսը) և Այվազովսկի:

Հեղափոխական-ապստամբական գործունեության մեջ ամենագլխավոր դերը հատկացվում է, իհարկե, հայ հոգևորականության: Առաջին հեղափոխականը, գրեթե «կոմիտաջին» Ներսես Աշտարակեցին էր, որ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ 60 հազար հայ զինվոր հանեց ռուսներին օգնելու համար: Թուրքաց կառավարությունն այսպես է հավատացնում, բայց պարզ իրողությունն այն է, որ Ներսեսի հավաքած զնդի մեջ կային ընդամենը 214 հոգի:

Ներսեսից հետո Էջմիածնի կաթողիկոսները դառնում են ռուսաց քաղաքականության գործիքներ և շարունակ աշխատում են անկախ Հայաստան ստեղծել: Նրանցից պակաս եռանդոտ չեն թուրքահայ պատրիարքները: Մինչև 1861 թվականը պատրիարքները հավատարիմ էին թուրք կառավարությանը: 1861-ին Սահմանադրություն ստեղծվեց, և Ձեյթունում կոմիտեները ապստամբություն բարձրացրին: Այստեղ դրվում է Պեշիկթաշյանի «Դու զո՞վ խնդրես» հայտնի երգի թարգմանությունը, պատմվում է, թե ինչպես հայերը դիմեցին Նապոլեոն III-ին: Այնուհետև գալիս են ամենահեղափոխական երկու պատրիարքները – Խրիմյան և Ներսես Վարժապետյան, որոնք հայոց հարցը հարուցին: Այդ հարցի էության մասին, իհարկե, չէ խոսվում, ինչպես նաև կատարյալ լռության է տրվում թուրք կառավարության վերաբերմունքը դեպի իր ստորագրած պարտավորությունները: Հայերն են շարունակ հանցավոր անջատականներ: Այսպես, 1878-ին նրանք նույնիսկ սկսում են ներկայացնել թատրոնական բեմերի վրա «Արշակ II» և «Վարդան Մամիկոնյան» ողբերգությունները:

Աբդուլ Համիդի ռեժիմի մասին ոչ մի բացասական արտահայտություն չկա: Հնչակյան և դաշնակցական կուսակցությունները եթե կազմվեցին և սկսեցին հեղափոխական գործողություններ, այդ ոչ թե այն պատճառով, որ թուրք կառավարությունը որևէ կերպով անբավականություն էր առաջ բերում հայերի մեջ, այլ որովհետև իրենք հայերն էին, ռուսական, անգլիական և ֆրանսիական ոսկիներով կաշառված, կոչվում կառավարության և մուսուլմանների դեմ:

Շատ հետաքրքրական է, որ այս տողերը գրելիս՝ գրքի խմբագրողը մոռացել է, որ թե Անգլիան և թե Ֆրանսիան այսօր են թշնամի Թուրքիային, իսկ այն ժամանակները նրա ամենամոտիկ բարեկամներն էին: Նույնպես և շատ տեղին է հիշվում, թե հայերը Ռուսիայում մեծամեծ հալածանքների էին ենթարկվում, բայց միննույն ժամանակ, ծիծաղելի հակասությունը չնկատելով, հավաստիացվում է, որ հայերը Թուրքիայում ռուսների դրդմամբ էին գործում:

Բավական մանրամասն պատմվում են Աշրգյանի պատրիարքության հանգամանքները, հնչակյանների և դաշնակցականների ցույցերն ու ապստամբական գործողությունները, անցողակի կերպով հիշվում է Սասունի ապստամբությունը 1894-ին, հետագա եր-

կու տարիներում եղած ահռելի կոտորածների մասին ոչինչ չէ ասվում, բայց չէ մոռացվում ամեն մի հեղափոխական գործունեություն: Եվ որպեսզի ցույց տրվի, թե հայերը Թուրքիայում ավելի լավ կացության ձգտելու իրավունք էլ չունեին, շարունակ առաջ են բերվում այն հալածանքները, որ այդ ժամանակ կրում էին ռուսահայերը Կովկասում: Այսպես, բերված է իշխան Գուլիցինի հայտնի զեկուցումը, որի հիման վրա փակվեցին մեր բոլոր հիմնարկությունները և խլվեցին մեր եկեղեցական կալվածները:

Բոլոր մինչև այժմ մեր պատմածները մի բան անկասկած են դարձնում. — այն, որ թուրք կառավարությունն ինքը չէր, իհարկե, այսքան մոտիկ ծանոթ հայոց անցյալ և ներկա տնային գործերին, այլ ունեցել է իր հայ աշխատակիցները, որոնք ներշնչումներ ու լուսաբանություններ են արել: Այո՛, այդպիսի հայեր եղել են: Եվ մենք կավելացնենք, որ նույնիսկ դժվար չէ գտնել դրանց հենց հիմա:

Կ. Պոլսում պատերազմից առաջ հրատարակվում էր կրոնական մի շաբաթաթերթ՝ «Տաճար» անունով, որ, որքան հիշում ենք, բավական պարկեշտ և պատվավոր կերպով էր ծառայում իր կոչման: Պատերազմը փոխեց այդ թերթի շուրջը խմբված հոգևորականներին և մանավանդ մեկին, որ ստորագրվում էր «Հրանտ վարդապետ»: Անցյալ տարվանից «Տաճար»-ն սկսել է համարներ բաց թողնել և ֆրանսերեն լեզվով («Dadjar» — «Տաճար»), ինչպես նաև բրոշյուրներ, որոնք նվիրված են հայկական շարժումներին: Այս գրականության հետ մենք գուցե մի այլ անգամ ծանոթացնենք մեր ընթերցողներին: Առ այժմ կասենք, որ ոչ մի թուրք հրապարակախոս չէր կարող այնքան անողորմ կերպով դատափետել հայերին, համարելով նրանց միակ պատճառ իրենց թշվառության: Վերաբերմունքը դեպի կոմիտեները, դեպի հայ նշանավոր հոգևորականները, դեպի ռուսահայությունը, դեպի վերջին կես դարում հայերի մեջ եղած ազգային մտավորական շարժումները ճիշտ նույնն է, ինչ այս կառավարչական հրատարակության վերաբերմունքը: Հարազատությունը կարելի է նկատել ոչ միայն ընդհանուր հոգու, այլև մանրամասնությունների, լուսաբանության եղանակների, նույնիսկ փաստերի դասավորման մեջ: Այնպես որ «Տաճար»-ն անպայման, գուցե հենց իր գլխավոր աշխատակից Հրանտ վարդապետի միջոցով աշխատակից է հանդիսացել կառավարության գեթ այս պատմական, առաջին մասին:

Ավելորդ է ասել, թե որքան ծանր, ուղղակի խեղդող տպավորություն է թողնում ընթերցողի մեջ այն գիտակցությունը, թե հայ մարդու մատն է դեկավարել թուրք կառավարությունը՝ ամբողջ հայությունն ապստամբական տրամադրություններով լցված մի ազգ ցույց տալու համար: Քննական կարողությունից զուրկ, ֆանատիկոսությամբ լցված շրջաններում այսպիսի աշխատանքը պիտի տրամադրե ավելի ևս կատաղի թշնամություն դեպի այդ ժողովուրդը, ավելի ևս պիտի բորբոքե կույր ատելությունը, ցանկություն իսպառ ոչնչացնելու այդ ազգը, որին զլացվում է իրավունք նույնիսկ ողբալու իր թշվառ բախտը: Արյուն է հայի հայրենիքը դարերից ի վեր, արյուն է ծծված նրա ամբողջ էության մեջ: Եվ երբ նա զգում է այդ հանգամանքը, երբ նա ասում է, թե իր տաճարների ավերակները լողում են արյան հե-

դեղների մեջ, այդ բացատրվում է իբրև ապստամբություն, որ, իհարկե, միմիայն կոտորածով կարելի է խեղդել:

Բայց Հրանտ վարդապետներն ու իրանց նմաններն արդարանում են նրանով, թե ուզում են ցույց տալ մեր քաղաքականության սխալները, ուզում են հանել հայության իր կորստյան ճանապարհից:

Այս իրավունքից, իհարկե, ոչ ոք չէր կարող նրանց զրկել, եթե միայն նրանք կարողանային ասել ամեն ինչ, ոչ միայն այն, ինչ դատապարտում է հայերին, այլև այն, ինչ արդարացնում է նրանց: Թե չէ, երբ ինչ թրքական է, պետք է անվերապահ կերպով փառաբանել, իսկ հային, այդ դարավոր ստրկին, ներկայացնել պատժի կարոտ զազանի տեսքում, այդ դեպքում գոնե պիտի լռելու առաքինությունն ունենան այդ սևահոգի սևազրուխները:

«Ժողովրդի Չայն» 15. XI. 1918, № 61:

III

Հայ հեղափոխական կոմիտեների վրա բարդված մեղադրանքները սաստկանում են մանավանդ օսմանյան սահմանադրության հրատարակումից հետո: Վերհիշենք անցողակի մի քանի հանգամանքներ, որոնք վերաբերում են այդ ժամանակներին:

Ինչպես հայտնի է, սահմանադրությունը Թուրքիայում հռչակվեց տասը տարի առաջ, 1908 թ. հուլիսին, Կ. Պոլսում կատարված հեղափոխության հետևանքով: Այդ շարժման գլուխ կանգնած էր Երիտասարդ Թուրքերի կուսակցությունը, որ, իբրև հեղափոխական կազմակերպություն, Արդուլ Համիդի երկար թագավորության միջոցին դաժան հալածանքների էր ենթարկված և նրա գլխավոր կոմիտեն ապաստանված էր արտասահմանում: Հարկադրելով Համիդին հրատարակել սահմանադրությունը, այդ կոմիտեն, որ կոչվում է «Իթթիհատ» («Միություն և Առաջադիմություն» ևս), իր ձեռքն առավ իշխանությունը և այն օրվանից մինչև այսօր Թուրքիայի միահեծան տերն է:

Սակայն այս կոմիտեն մենակ չէր տարել հեղափոխության գործը: Նույն թվականի ձմեռը Փարիզում կայացավ Թուրքիայի մեջ գործող հեղափոխական մարմինների համագումար, որ հավաքվել էր նույն Երիտասարդ Թուրքերի նախաձեռնությամբ: Այդտեղ այդ մարմինները միացան՝ Արդուլ Համիդի բռնակալությունը տապալելու համար: Հայ կազմակերպություններից այդ համագումարին մասնակցում էր միայն Դաշնակցությունը: Այդ օրվանից էլ սկսվում է Երիտասարդ Թուրքերի և դաշնակցականների եղբայրացումը քաղաքական հողի վրա: Հեղափոխության ժամանակ և նրանից հետո ձիգ ամիսներ շարունակ Երիտասարդ Թուրքերը խունկ էին ծխում հայ հեղափոխության առաջ, ասելով, թե նա էր կոչվում Արդուլ Համիդի դեմ և նա է Թուրքիայի ազատության ծնողը: «Իթթիհատի» ամենանշանավոր գործիչները, մինիստրներ անգամ, գնում էին հարգելու սպանված հայ հեղափոխականների գերեզմանները, խանդավառ ճառեր էին արտասանում հայոց եկեղեցիների մեջ կազմված միտինգներում, չտեսնված հանդիսավորությամբ ընդառաջ էին գնում Երուսաղեմից

վերադարձող Բզմիրյան պատրիարքին և այլն, և այլն: Հայ շարժումների մի ամբողջ պաշտամունք էր կատարվում ամիսների ընթացքում և այդ պաշտամունքի գլխավոր քուրմերը Երիտասարդ Թուրքերն էին: Հայ հեղափոխականներն էլ, իհարկե, ոչ պակաս խանդավառությամբ էին ցուցադրում իրանց եղբայրացումը թուրքերի հետ:

Այսպես էր սահմանադրական Թուրքիայում, երբ 1909-ի գարնանը հանկարծ պայթեց մի նոր աղետ հայերի գլխին — Ադանայի ջարդը, որին զոհ գնացին 30 հազար անմեղ հայեր: Թվում էր, թե արյան այս ահռելի հեղեղը կկանգնե հայ և թուրք կոմիտեների մեջ, կբաժանե նրան: Բայց դաշնակցական - իթթիհատական կապերն ավելի ամուր հանդիսացան, քան կարելի էր կարծել: Եվ հենց Ադանայի աղետից հետո էր, որ պաշտոնական դաշնադրություն կնքվեց երկու կոմիտեների մեջ, որի պայմաններից մեկն այս էր, թե Ադանայի ջարդը պիտի մոռացության տրվի: Այս հարկավոր էր, որպեսզի երկու կուսակցություններն իրար ձեռք ձեռքի տված գործեին քաղաքական հողի վրա, մասնավորապես օսմանյան պառլամենտում:

Այս բարեկամությունը շարունակվեց մինչև այն կետը, ուր արդեն ժողովրդական ասացվածքի կատարումն էր գալիս — «շատ մի սիրիլ, ատել կա»: Եկավ ատելությունը: Եվ դաշնակցականները, երեկվա ամենացանկալի դաշնակիցները, դարձան Երիտասարդ Թուրքերի թշնամիներ: Այսպես նկատվեցին և հնչակյանները:

Ահա Ժեռն Թուրք կառավարությունը մոռացել է այդ բոլորը: Մոռացել է, որ եթե կոմիտեները չարիք են, ինքն էլ, վերջապես, մի կոմիտե է: Վերև թված փաստերից ոչ մեկն էլ նա չէ հիշում իր հրատարակած «Aspirations»-ի մեջ: Նա միայն ասում է, թե սահմանադրությունից հետո հայ կոմիտեները պիտի թողնեին իրանց հեղափոխական գործունեությունը, անցնեին խաղաղ աշխատանքի: Եվ իրավունք ունի այսպես ասելու, քանի որ կոմիտեներն իրենք բացարձակ հայտարարել էին, թե այսուհետև նրանց մնում է խաղաղ աշխատանքի ասպարեզը:

Որ այս միանգամայն սուտ չէր, վկայում է հենց ինքը կառավարությունը, հայտնելով, որ Թուրքաց Հայաստանի ամբողջ դպրոցական գործը, ամբողջ գյուղական վարչությունն անցան դաշնակցականների ձեռքը: Բայց ինչպե՞ս է ընդունվում այդ խաղաղ գործունեությունը: Բանից դուրս է գալիս, որ համիդյան բռնակալությունը ավելի շատ անհամբերող չէր դեպի հայոց լեզուն, հայոց պատմությունը, հայի ազգային զգացմունքը, քան սահմանադրական Թուրքիան: Մամուլի, ժողովների, դաստիարակության ազատություն բերած սահմանադրության հովանու տակ տպվեցին դպրոցական դասագրքեր, որոնք ցույց էին տալիս թուրք կառավարության, թե դրությունը հայ կոմիտեների մեջ մնում է միևնույնը, ինչ էր մինչև սահմանադրություն, թե հայոց դպրոցները շարունակում են մնալ հեղափոխության և ապստամբության օջախներ: Այս իրողությունն ապացուցելու համար թուրք կառավարությունը բերում է մի քանի հատվածների թարգմանությունը: Եվ որովհետև վերին աստիճանի բնորոշ են այս ապացույցները, ուստի չենք կարող այստեղ չդնել դրանցից մի քանիսի բառացի թարգմանությունը:

Կտորները վերցված են այն ընթերցարաններից, որ հրատարակել են տիկին Զապել և սրա ամուսին Հրանտ Ասատուր, երկու պատկանելի դեմքեր Կ.Պոլսի հայ մտավորականության մեջ, որ այժմ համարյա թե ամբողջովին ջնջված է:

1914-ին սրանք Մատթեոսյանի տպարանում տպել են նախակրթարանների գործածության համար վարժության մի դասագիրք, և դրա մեջ «Հայրենասեր Երվանդ» վերնագրի տակ կարդացվում է.

«Երվանդն իմ ընկերն է: Ես նրան շատ եմ գնահատում, որովհետև սա մի հայրենասեր երեխա է: Նա շատ լավ խոսում է հայերեն և շատ ուշադրությամբ հետևում է այն դասերին, որոնք վերաբերվում են լեզվին և մեր ազգային պատմության: Նա նման չէ այն երեխաներին, որոնք չգիտեն իրանց մայրենի լեզուն, խոսակցության մեջ շարունակ օտար բառեր են գործածում և միայն եվրոպական գրվածքներ են կարդում: Նա կարող է ձեզ <հետ> խոսել հայոց առասպելներից և պատմել մեր թագավորների քաջագործությունները և այն թշվառությունները, որոնց ենթարված էին նրանք: Ուր որ տեսնում է մի որևէ հայ գրողի պատկեր, իսկույն նրան ճանաչում է և տալիս է նրա անունը»:

Ապա կառավարական հրատարակությունը տալիս է այսպիսի նկարագրություն. «Միևնույն գործի երրորդ երեսը գտնվում է Հայաստանի թագավոր Արտաշ 1-ի արժանիքները: Երեսուկոթներորդ երեսը ցույց է տալիս Անի քաղաքի ավերակները, որ Հայաստանի կառավարության աթոռանիստն էր: Հիսունհինգերորդ երեսը պարունակում է Կիլիկիայի թագավոր Լևոնի կենսագրությունը. յոթանասուներորդ երեսը՝ Վարդան Մամիկոնյանի կենսագրությունը և ինսուներթերորդ երեսը պատմում է Տրդատի թագավորության դեպքերը: Այս բոլոր երեսները պատկերագրող են»:

Ահա և հայտնի բանաստեղծ Ալեքսանդր Փանոսյանի ոտանավորը – «Հայաստանի Արև» վերնագրով.

«Ով Հայաստանի սիրելի արև, ձգիր քո հայրենի դաշտերի վրա: Գարունը, որ մեզ կյանք կտա բարի, կապույտ երկնքի շողերի տակ, եկել է: Տարածի ի մեր մշակների վրա բարեգործ ջերմությունը և ծավալիր հայերի ճակատների վրա հավատի և հույսի սուրբ ճառագայթներ»:

Կամ թե նայեցե՛ք հետևյալ բանաստեղծությունը, որ կրում է «Միություն» վերնագիրը.

«Ինչ կրոնի էլ պատկանենք, հայեր, աշխատեցե՛ք միշտ կողք կողքի: Դուք ունիք միևնույն պատմությունը, միևնույն լեզուն, միշտ մյուսին կպած եղեք: Ինչ կոմիտեների և պատկանեք, հայեր, միշտ ձեռք ձեռքի տված գնացեք: Դուք միևնույն լեզուն ունիք և միևնույն հայրենիքը, հետևաբար ունեցեք և միևնույն նպատակ, միևնույն հոգի: Ինչ տեղ և ինչ դիրքում էլ դուք գտնվելու լինիք, հայեր, եղեք միշտ սրտով իրար կապված: Միշտ միևնույն փոթորիկն է եղել, որ ավերել է ձեր կյանքը. եղեք անբաժան և միացած ընկերներ: Ինչ աստղերի տակ և ապրեք դուք, հայեր, ձեզ եղբայրական սերն է հարկավոր: Իրանց գերեզմանների խորքից ձեր նախնիքները ձեզ հանձնարարում են միություն»:

Մի նշանակելի ծանոթագրություն ևս, որ տալիս է կառավարությունը. «Այս միևնույն գրքերը, ի միջի այլոց, տալիս են Կովկասի հայ գրողների և բանաստեղծների, ինչպես նաև տեղացի և օտար հեղափոխականների պատկերները»:

Ահա թե ո՞րքան անմեղ բաներ թուրք սահմանադրական կառավարության աչքում կարող էին դառնալ, երբ խնդիրը հայերին է վերաբերվում, ոճիրներ և ապստամբական գործողություններ... Դասագրքերից դուրս այսպիսի «հակապետական» հանցանքները, հարկավ, կարելի էր գտնել և ուրիշ գրքերում, այն էլ մեծ քանակությամբ: Նույնիսկ Հայաստանի աշխարհագրությունը ո՞րքան ահավոր մեղքեր ունի գործած օսմանյան կառավարության դեմ: Երևակայեցեք, Վան, Էրզրում, Դիարբեքի անունների տեղ հայերը գործ են ածում Վասպուրական, Կարին, Տիգրանակերտ անունները: «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի կառավարությունը շարունակում էր հայերի վերաբերմամբ համիդյան հռչակավոր գրաքննությունը:

Հետաքրքրական հարց է՝ թե թուրքաց գործակալները ո՞ր աստիճան բարեխղճությամբ են վերաբերվում իրանց ձեռքի տակ եղած գրքերին, որոնցից քաղվածքներ են անում հայոց անհավատարմության ու ապստամբական ձգտումներն ապացուցելու համար:

Մենք ունենք մի փաստ՝ այս հարցը լուսաբանելու համար:

Պատերազմից առաջ Կ. Պոլսում բավական անուն էր հանել և շատ տարածված է Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը» վերնագրով օրացույց - ալմանախը: Հայտնի է, որ յուրաքանչյուր տարվա օրացույց տպվում է նախընթաց տարում, և ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, քանի որ օրացույցը հասարակության ձեռքին պիտի լինի ամեն տարվա հունվարի 1-ին: Սովորաբար այսպիսի հրատարակությունները պատրաստվում և տպագրության են հանձնվում ամառը: Այնպես որ Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը» որ նշանակված էր 1914 թվականի համար, խմբագրվել և տպագրվել է 1913 թվականին, երբ խոսք անգամ չկար ներկա համաշխարհային պատերազմի մասին և ինքը Թուրքիան չգիտեր, թե պիտի լինի այդպիսի պատերազմ և ինքն էլ պիտի մասնակցե նրան: Եվ ահա Թեոդիկը դրել է 1914-ի Տարեցույցի մեջ մի շատ փոքրիկ պատկեր, որ ներկայացնում է գեներալ Լազարնին պատերազմի դաշտում: Պատկերի երկու կողմին տպված է. «Ռուսահայ նշանավոր գորապետ Հովհ. Լազարն, որ Ալաճա - Տաղի հաղթությունը կտանի Արևելյան պատերազմին մեջ (1877): Չախակողմը՝ ծանոթ գրագետ Գրիգոր Նիկողոսյան» (եր. 131): Նույն այդ գրքի մեջ կա մի հոդված «Անցյալեն և Ներկայեն» վերնագրով, ուր գտնվում են Արևելյան հարցի և Հայոց հարցի համառոտ պատմությունը (եր. 199-223): Հայոց հարցի պատմությունն սկսվում է Կիլիկյան շրջանից մինչև 1913 թվականը, երբ եվրոպական պետությունները նորից ձեռք էին առել Բեռլինի 61 հոդվածը և բարեկարգությունների ծրագիր էին մշակում:

Ահա Տարեցույցի այս երկու կտորներն էլ մտել են «Aspirations»-ի մեջ, այն էլ ինչպիսի լուսաբանությամբ: «1914-ի իր հրատարակության մեջ, այն ժամանակ, երբ բոլորած էր ընդհանուր պատերազմը, երբ օսմանցիներն արդեն կովում էին ռուսների դեմ և հայկական հրոսախմբներն սկսել էին իրանց գործունեությունը երկրի ներսում և

սահմանների վրա, այս ալմանախը ներս բերեց ռուսաց գործի հայ օֆիցերների և գեներալների պատկերներն ու կենսագրությունները, ծանոթագրելով նրանց շահատակությունները Հայոց հարցի մի մանրամասն պատմական տեսություն» (եր. 59):

Այս փաստը ցույց է տալիս, թե չէ կարելի անվերապահ վստահություն ունենալ, թե թուրքական գործակալները միանգամայն բարեխղճաբար են վարվում իրանց ձեռքում եղած գրավոր փաստերի հետ:

«Ժողովրդի Չայն» 20. XI. 1918, № 65:

IV

Մինչև այստեղ մենք տեսանք, թե ո՞րքան անմեղ, ո՞րքան սովորական, մարդկային տարրական ազատության համապատասխանող արտահայտություններից էր թուրք կառավարությունը ապստամբական-անջատական փաստեր ստեղծում: «Ապացույցների» այս մասը, կարելի է միանգամայն հավատացած լինել, բոլորովին հակառակ տպավորություն պիտի թողնե քաղաքակիրթ մարդկության մեջ, այն թե որքան կարող է ճնշված ու խեղդված լինել մի ժողովուրդ իր զգացմունքների մեջ:

Բայց այս բոլորն, իհարկե, ապացույց չէ, թե Թուրքիայում չկար հեղափոխական գրականություն և թե թուրք կառավարությունը չուներ իր ձեռքի մեջ զանազան հեղափոխական շարժումների թելերը:

Օսմանյան սահմանադրությունից հետո հայ հեղափոխական կուսակցություններն սկսեցին գործել Թուրքիայում բացարձակ, օգտվելով մամուլի ազատությունից: Նրանք թերթեր հիմնեցին, աշխատում էին հայ կյանքի ամբողջական և անվերապահ տերը դառնալ: Ժնևից և Փարիզից Կ.Պոլիս ուղարկվեցին հազարավոր բրոշյուրներ և պատկերներ, որոնք ներկայացնում էին դաշնակցական և հնչակյան հայդուկներին, նրանց գործերը: Այս հրատարակությունները տարածվում էին հազարավոր, տասնյակ հազարավոր օրինակներով անարգել, բացարձակ: Չէ՞ որ նրանք հին ռեժիմն էին պատկերացնում, համիդյան կարգը, որ միատեսակ անիծում էր և Երիտասարդ Թուրքերի կուսակցությունը, նրա հետ և ամբողջ սահմանադրական օսմանցիությունը: Ոչինչ նշան չկար, թե սահմանադրական «Իթթի-հատը» որևէ կապ կարող է ունենալ Համիդի իդեալների հետ: Եվ երբ տեղի ունեցավ Ադանայի ջարդը, Երիտասարդ Թրքությունն իր կառավարության բերանով հայտարարեց, թե դա ռեակցիայի, այսինքն նույն կարմիր Սուլթանի գործն է, թե հայերը պիտի բավարարություն ստանան իրանց կրած նյութական զրկանքների համար և այլն:

Հայ հեղափոխական կուսիտները ոչինչ չէին նկատում կամ, ավելի ճիշտ, ոչինչ չնկատող էին ձևանում: Հնչակյաններն ու դաշնակցականները, իբրև հավիտյան իրար հետ մրցող հակառակորդներ, ջանք չէին խնայում միմյանց գերազանցելու համար թե՛ գործով, թե՛ մանավանդ գրություններով, ինքնագովությամբ, հոխորտալից և բորբոքիչ ոճով: Հայկական միամտությունը, միացած մրցակցական չափազանցությունների հետ, իհարկե, չէ թուլատրել «Ազատ Թուրքիա-

յում» գործող կոմիտեներին տեսնել, որ իրանց այդ սրտաբաց, հրապարակային պրոպագանդը հարուստ նյութ է տալիս ռեակցիային:

Այդ հեղափոխական գրականությունը, բաղկացած շոնդալից կոչերից, ինքնագովական ու ազգամոլական հոխորտանքներից, վավերագրերի մեծ պաշար է մատակարարել թուրք կառավարության: Նրա ձեռքում են դաշնակցականների ու հնչակյանների ընդհանուր ժողովների բնագիր արձանագրությունները, որոնց նմանահանությունները գրավում են բազմաթիվ էջեր «Aspirations»-ի հավելվածի մեջ: Բազմաթիվ են և բռնված մասնավոր նամակները, որոնցից լայնորեն օգտվում է կառավարությունը:

Կարիք չկա, որ մենք առանձնապես մանրամասնորեն զբաղվենք այդ կոմիտեական գրականությամբ: Նրա ժանրը, նրա բովանդակությունը, լեզուն ամենքին արդեն շատ լավ հայտնի են և միշտ էլ կմնան մեծախոսության և չափազանցությունների օրինակ: Չենք վիճում, թուրք կառավարության հայթայթած այդ մեծաքանակ «վավերագրերը» նյութ կդառնան պատմության համար, բայց նյութ՝ լոկ հայկական հեղափոխական գործունեությունը բնորոշելու համար: Ամենափոքր բանի համար մեծ աղմուկ — ահա այդ ամբողջ գրականության հոգին ու էությունը:

Երբ Բալկանյան պատերազմի հետևանքով 1913 թվականին նորից արծարծվել սկսեց Հայոց հարցը – հեղափոխական երկու կոմիտեները («Հնչակ» և «Դաշնակցություն») գլխապատառ ասպարեզ նետվեցին իրանց ծրագիրներով, իրանց պահանջներով և պատրաստություններով: Պատրիարքարանն ամբողջովին դաշնակցության ձեռքին էր, և թուրք կառավարությունը, որ մեծ տհաճությամբ էր տեսնում իր նախկին դաշնակիցների այս նոր շարժումները դիվանագիտական հողի վրա, սկսեց նույնացնել հայ հոգևորականության բարձր շրջանները կոմիտեների հետ:

Միաժամանակ կոմիտեներն սկսեցին առանձին եռանդով վերստեղծել իրանց հին գործունեությունը, այն է՝ զենքեր ձեռք բերել ժողովրդի ինքնապաշտպանության համար: Գործն այս անգամ էլ մնաց, ինչպես և միշտ, փոքր, աննշան իր գործնական հետևանքներով, բայց և ինչպես միշտ, մեծ աղմուկ հարուցեց, կուսակցական ցուցամոլությունների միջոց դարձավ: Կառավարությունը հրատարակում է Հնչակյան կուսակցության զանազան բյուրոներից Կ. Պոլիս ուղարկված 12 նամակներ, որոնց մեջ զենքեր գնել են խնդրում՝ ժողովրդի ինքնապաշտպանության համար: Պատրաստվելու և պահանջելու հրահանգներ են տալիս և դաշնակցական շրջաբերականները՝ ուղղված զանազան բյուրոների: Դրանց թիվը հասնում է վեցի:

Եվ ահա այս բոլոր վավերագրերը գալիս գումարվում են, որ առիթ տան թուրք կառավարության ասելու, թե պատերազմի նախօրյակին Թուրքիայի ամբողջ հայ ազգաբնակչությունը ոտից գլուխ զինվում էր ապստամբության համար:

Այս, իհարկե, փաստորեն ճիշտ չէ, և այսպիսի եզրակացություն, ինչպես կտեսնենք շուտով, անել է տալիս հենց ինքը թուրք կառավարությունը իր հրատարակած այս ստվար հատորով:

Բայց ինչ փույթ, եթե իրոք այսպես չէր, եթե իրոք հայ ժողովուրդը ոչ մի ապստամբական շարժում կատարելու ուժն ու հնարավորությո-

յունը չունենք: Բանն այն է, որ Երիտասարդ Թուրքերի կառավարությունը որոշած ունենք համիդյան միջոցով հայ ժողովրդից ազատվել: Եվ ահա այս գործի մեջ նրան լավ պատրվակ էր տալիս կոմիտեական ամբողջ գործունեությունը իր դիպլոմատիական և զինական կողմերով, որոնք հեղափոխական ռոմանտիզմի սնամեջ և պոռոտախոս վարժություններ էին ներկայացնում:

«Ժողովրդի Չայն» 24. XI. 1918, № 68:

V

Գրքի երրորդ մասը, որ կրում է «Ապստամբական շարժումներ» («Évenements insurrectionnels») վերնագիրը, ամենից կարևորն է և ամենից հետաքրքրականը: Ինչ մինչև այժմ պատմել է Ժեռն Թուրք կառավարությունը, նախապատրաստություն էր միայն ապացուցելու համար, թե հայերը վաղուց իրանց կոմիտեաների ձեռքով մղվում էին դեպի ընդհանուր ապստամբություն: Այժմ նույն կառավարությունը պիտի ապացուցանե, թե այդ ընդհանուր ապստամբությունն սկսվեց 1914 թվի հուլիսի 20-ից, երբ Բ. Ղուրբ, դեռ առանց պատերազմի մեջ խառնվելու, հայտարարեց ընդհանուր զինակոչ:

Այս երրորդ մասը գրքի համարյա կես մասն է կազմում և պարունակում է շատ մանրամասնություններ այն դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել Թուրքիայի ասիական մասում մոտ 1 և կես տարվա ընթացքում: Շատ բան այստեղ մեզ ծանոթ չէ, և այս հանգամանքն ավելի ևս հետաքրքրական է դարձնում: Տարաբախտաբար, այս հետաքրքրությունն ավելի վիպական բնավորություն ունի, քան այն, ինչ պատճառում է պատմական լուրջ, հետևողական, տրամաբանորեն անհողողող տեսությունը: Թուրք կառավարության գործակալների առջև դրված է եղել կանխորոշված մի տենդենցիա — ապացուցել հայերի ապստամբությունը: Եվ ահա այս պահանջին բավարարություն տալու համար առաջ են քաշվել և՛ երևակայություն, և՛ տրամաբանական անհեթեթություններ, և՛ փաստերի կոպիտ աղավաղումներ:

Այստեղ մի անգամ էլ կրկնենք, որ թուրքական հերյուրումները հերքելու համար կարիք չկա դիմելու այն բազմաթիվ օտարազգի վկաներին, որոնք տեսել և նկարագրել են թուրք կառավարության գործերը հայերի նկատմամբ: Նրանք շատ լավ հերքվում են հենց նույն այս հրատարակության տվյալներով: Բավական է յուրաքանչյուր դեպք դնել իր տեղը, լուսաբանել իր ժամանակի և միջավայրի փաստերով: Գործը չափազանց հեշտացնում է մանավանդ այն հանգամանքը, որ թուրք գործակալները, որոնց հանձնված է եղել գրքի խմբագրությունը, չափազանց կարճ հիշողություն են ունեցել և կարծել են, թե գործ ունին երեխաների հետ:

Այսպիսի տպավորություն թողնում է ամենից առաջ հենց այն գրույցը, իբր թե կոմիտեաները ապստամբական շարժում պատրաստում էին և մինչև պատերազմի հայտարարությունը և թուրքական զինակոչը: Բայց ինչո՞ւ պետք է այդպես լիներ: Թուրք գործակալները մոռացել են, որ հայության բոլոր խավերը, սկսած կոմիտեաներից, 1914-ին միանգամայն բավարարված էին համարում իրանց, քանի որ

նույն տարվա հունվարին ինքը թուրք կառավարությունն ընդունել էր հայկական ռեֆորմների ծրագիրը և նույնիսկ նշանակվել էին եվրոպացի երկու կոմիսարներ՝ այդ ռեֆորմները գործադրելու համար: Ընդհակառակը, եթե կար հայ կյանքի մեջ մի շրջան, երբ խաղաղություն և գործնականություն էր տիրում, այդ հենց 1914-ի առաջին կիսամյակն էր:

Հավասարաչափ անհեթեթ է և այն պնդումը, որ իբր թե հենց որ ընդհանուր զինակոչ հայտարարվեց, ռուսական, անգլիական և ֆրանսիական դեսպանատներն ու հյուպատոսարաններն սկսեցին ոսկի բաժանել հայ կոմիտեներին, որոնք և իսկույն ոտքի կանգնեցրին հայերին: Այսպես պնդում և հավատացնում է թուրք կառավարությունը շատ տեղ: Ստացվում է այնպիսի տպավորություն, իբր թե զինակոչի հայտարարման առաջին և եթե օրերից թուրք կառավարությունը գործ ուներ հայկական մի ընդհանուր դիմադրության և թշնամական շարժման հետ, որ պահպանում և հովանավորում էին Եռյակ Համաձայնության պետությունները:

Սակայն ի՞նչ է ասում իրականությունը: Թուրքիան, ճիշտ է, պատերազմի սկսվելուն պես զինակոչ հայտարարեց, բայց համարյա ամբողջ երեք ամիս իրեն չեզոք էր պահում և նույնիսկ սակարկություններ էր անում Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ՝ այդ չեզոքությունն ավելի թանկ գնով ծախելու համար: Անգլիական «Կապույտ գիրքը» ֆրանսիական «Դեղին գիրքը» և ռուսական «Նարնջի գիրքը» լիքն են այդ սակարկությունների մանրամասնությունները ներկայացնող պաշտոնական հաղորդագրություններով: Նույն այդ վավերագրերը ցույց են տալիս, որ Եռյակ Համաձայնությունը մինչև վերջին վայրկյանն ամեն միջոց գործադրում էր, որ Թուրքիան չեզոքություն պահպանե, փոխարենը խոստանում էր երաշխավորել Թուրքիայի ամբողջությունն ու անձեռնմխելիությունը, ինչպես և ուրիշ զիջումներ անել: Այս բոլոր բանակցություններն ամենալավ ապացույցն են, որ Համաձայնության պետությունները մինչև հոկտեմբեր ամիսը ոչ միայն չէին կարող խրախուսել որևէ հայկական շարժում, այլ, ընդհակառակը, եթե ճիշտ որ այնքան մեծ ազդեցություն ունեին հայերի վրա, ամեն կերպ պիտի աշխատեին, որ ոչ մի շարժում չլինի ասիական գավառներում: Իսկ հոկտեմբերից հետո, երբ Թուրքիան միացավ Գերմանիային, պետության ոչ մի կողմում այլևս Համաձայնության պետությունների ոչ մի դիվանագիտական գործակալ չկար, որ պրոպագանդ աներ, ոսկի ու զենք տար կոմիտեներին, նրանց և արտասահմանի մեջ հարաբերություններ պահպաներ, և այլն, և այլն, ինչպես հավատացնում է թուրք կառավարությունը: Եվ եթե 1914-ի օգոստոսին, գորակոչի հետևանքով, ճիշտ որ խռովություններ են ծագել Զեյթունի մեջ, ինչպես պնդում է թուրք կառավարությունը, այդ չպետք է նկատել իբրև ընդհանուր ապստամբության մի դեպք, այլ պարզապես մի շարժում, որ առաջացած էր գորահավաքի ժամանակ թուրք իշխանությունների ցույց տված ճնշումներից:

Այնուհետև ուշադրության արժանի է, որ թուրք կառավարությունը հայերին ներկայացնում է իբրև զինվորական ծառայությունից փախչողների, դասալիքների և այլն: Բայց այդ երևույթը նկատվում է

ամեն տեղ, ուր պարտադիր զինվորագրություն կա: Թուրքիայում էլ, ինչպես հավաստիացնում են վերոհիշյալ դեսպանական վավերագրերը, գորահավաքը մեծ դժգոհություն պատճառեց մահմեդականներին, որոնք նույնպես չէին ուզում պատերազմ: Բայց այս երևույթները ոչ մի տեղ չեն ընդունվում իբրև անհավաստարմության կամ ապստամբության նշան: Որովհետև հազարավոր փախչողների և դասալիքների հետ տասնյակ հազարներով են այն մարդիկ, որոնք գնում են կովեյու: Այսպես և հայերը: Մինչև այս տարի Միբիրում բնակեցրած հազարավոր հայ գերի ասկյարներն ապացույց են, որ թուրքահայերը իրանց պարտքը կատարել են: Եվ եթե ավելին չեն կարողացել անել, այդ իրանց մեղքը չէ... Աշխարհին հայտնի է, թե ինչ տանջանքների էին ենթարկվում հայ զինվորները օսմանյան բանակում: Դեռ զարմանք է, որ այդքան հայեր մնացին գորքերի շարքում:

Բայց հայկական ապստամբության գրույցը ամենից լավ հերքում է թուրք կառավարությունը, հավատացնելով, թե նա պատրաստվում էր ամեն տեղ, ուր հայեր էին ապրում: Հասկանալի կլինեք, հաստատ կհամարվեր ապստամբություն այնպիսի վայրերում, ուր հայերը ազգաբնակչության մեծամասնությունն են կազմում: Բայց ապստամբություն և Տրապիզոնում, Հալեպի վիլայեթի երեք թե չորս հայ գյուղերում, ինչպես հավատացնում է կառավարությունը... Ո՞վ կհավատա: Ո՞վ կհավատա, թե միլիոնավոր այլազգիներով շրջապատված մի բուռ, կես բուռ մարդիկ այնքան խենթացած կլինեն, որ, չհաշվելով իրենց ուժերը, ապստամբություն կհարուցանեն: Եվ կարո՞ղ է միթե խենթերի այդ փոքրիկ հատվածը որևէ վախ ներշնչել մի կառավարության:

Մնում է մի հանգամանք, որ, իսկապես, սաստիկ գրգռել է թուրք կառավարությունը, այն է՝ հայ կամավորական շարժումը: Այս մի շատ խոշոր փաստ է, և երբևիցե պատմությունը կպարզաբանե նրա իսկական դեմքը, այն բոլոր հանգամանքները, որոնց մեջ և որոնց շնորհիվ այդ շարժումը դարձավ մի հռչակ, որ բոլորովին անարժան էր նրա իսկական բովանդակության: Պատմությունը, անկասկած, կմերկացնե և այն՝ հավիտյան ողբալի՝ հանգամանքը, որ կամավորական շարժումը տեղի ունեցավ հակառակ թուրքահայ ժողովրդի ցանկության, ուրեմն և բոլորովին անմեղ էին արյան այն վտակները, որ թուրք կառավարության թուլլտվությամբ հոսեցրին այդ ժողովրդի երակներից հենց այդ շարժման պատճառով:

Այստեղ միայն այն շեշտենք, որ այդ դժբախտ ձեռնարկությունը ծավալ առավ և մի տարուց ավելի գոյություն պահպանեց անասելի աղմուկի և աղաղակների մեջ, ճնշված անհաշիվ ստերի, չափազանցությունների, հոխորտանքների, պոռոտախոս հոխորտանքների տակ: Բավական է ասել, որ հայ կամավորությունը ամենազարգացած բույեին իսկ հազիվ 8 հազար հոգուց ավելի եղած լինեք: Ներկայիս ահռելի պատերազմների մեջ, ուր 100 հազարն էլ մեծ ուժ չէ կազմում, 2-4 կամ 5 հազար մարդուն մի որևէ վճռական դեր վերագրելը առնվազն ծիծաղելի կլինեք: Բայց հիշեցեք ինչեր եղան այդ փոքրաթիվ կամավորների շուրջը: Կոմիտեական ռուսանտիգմը և հեղափոխական-լեզվագաղթությունը աշխարհը լցրին գովասանքով ու փառաբանություններով: Կամավորների թիվը հասցրին 40, կարծեմ, նույ-

նիսկ 80 հազարի: Մի 20–50 մարդկանց խմբական պատկերը տպում էին «Հորիզոնի» մեջ և տակը տպում — «Հայկական (այս ինչ) բանակ»...

Եվ ահա այն ամբողջ աղմուկ-աղաղակից, ստերից ու չափազանցություններից առատորեն օգտվել է թուրք կառավարությունը, բերելով բազմաթիվ վավերագրեր: Ինքն էլ իր կողմից չէ զլացել ստեր ավելացնել այդքան ստերի վրա: Այսպես, նա բերում է մի կոչ, որ իբր թե ուղղել էր հայերին — գիտե՞ք ով ... Նիկոլայ Երկրորդը, ցարը (եր. 138–139): Բավական է մի անգամ նայել այդ «վավերագրին» հասկանալու համար, թե նա մի կոպիտ և նույնիսկ անգրագետ կեղծիք է: Բայց նա հարկավոր է եղել մի իսկապես դժբախտ ժողովրդի բնաջնջման լճիորը... «օրինականացնելու համար»:

Մի ուրիշ օրինակ: 1914-ի օգոստոսի 5-ին Գեորգ կաթողիկոսը գրել է մի շրջաբերական կոնդակ, որով հորդորում է հայերին իրանց հայրենասիրական պարտքը կատարել Ռուսաստանի վերաբերմամբ, այնպիսի մի ժամանակ, երբ նրա վրա հարձակվել են թշնամիները, կազմակերպել օգնություն զինվորների ընտանիքներին, վիրավորներին: Այս կոնդակը թուրք կառավարությունն ամենայն հանդիսավորությամբ դրել է «փաստագրերի» շարքում, նույնիսկ տպել է և «Արարատի» երեսի պատկերը, ցույց տալով, որ այդ համարի մեջ է տպված այդ դիմումն ընդհանուր հայության, որի բուն նպատակն է ապստամբություն քարոզել Թուրքիայի դեմ: Սակայն հայտնի է, որ 1914-ի օգոստոսի սկզբին Թուրքիան ոչ միայն պատերազմ չէր սկսել, այլև նրա սուլթանն ու մեծ վեզիրը ամեն կերպ հավատացնում էին Համաձայնության դեսպաններին, թե իրանք չպիտի խառնվեն պատերազմի մեջ, չեզոքություն պիտի պահպանեն: Հետևաբար, կոնդակը ոչ մի վերաբերմունք չունի Թուրքիային և ուղղված է լոկ ռուսահայերին:

Երիտասարդ թրքությունն առհասարակ ջղայնոտ և դյուրագրգիռ բնավորությամբ է հայտնի: Եվ այս հատկությունները մեծ դեր են կատարել հայկական մեծ տրագեդիայի մեջ: Թուրք կառավարության անդամներին անձնապես շատ է զրգոել մանավանդ այն հանգամանքը, որ օսմանյան պառլամենտի անդամ և հայտնի դաշնակցական շեֆ Արմեն-Կարոն, որին հենց ինքը թուրք կառավարությունն էր ազատել ռուսական ժանդարմների ձեռքից, անցնելով Կովկաս, դարձել էր կամավորական խմբերից մեկի հրամանատար: Այս հանգամանքն այնքան խոշոր էր երևում թուրք մինիստրների աչքում, որ պատասխանելով երեք պետությունների այն հայտարարության, որ բերված է մեր այս հողվածների սկզբում, նրանք ամենից առաջ, իբրև հաստատություն հայ ապստամբական շարժման, մատնանիշ էին անում Արմեն-Կարոյի այս վարմունքը և հայտարարում էին, թե նրա պատկերը տպված է դաշնակցական «Ասպարեզ» թերթի մեջ:

Մոռանում էին թուրք կառավարության անդամները, որ մի ժողովրդից կարող են դուրս գալ մի քանի այդպիսի պառլամենտական գործիչներ, բայց և այդպես, նրանց պատճառով չէ կարելի բնաջնջման ենթարկել այդ ամբողջ ժողովուրդը:

Երիտասարդ Թուրքերի դյուրագրգռությունն արտահայտվում է մասնավորապես և այն հանգամանքի մեջ, որ նրանք հայ կամավոր-

րական խմբերը համարում են ապացույց թուրքահայ ժողովրդի ապստամբության: Ինչո՞ւ: Հաստատել է նրանք արդյոք, թե թուրքահայ ժողովրդից շատերն էին, որ փախան իրանց երկրից և մտան կամավորների շարքերի մեջ: Ո՞չ, այդպիսի ապացույց նրանք չեն ներկայացնում և ներկայացնել չեն կարող:

Բայց շատ թուրքահայեր, վաղուց փախած լինելով թուրքական յաթաղաններից ու կախաղաններից, բնակություն են հաստատել Եգիպտոսում, Բոլգարիայում, Ռուսինիայում, բայց մանավանդ Ամերիկայում, ահագին մեծամասնությունը վաղուց փոխել է իր հպատակությունը, նույնիսկ փոխել է իր հայկական տիպի շատ հատկանշանական գծերը: Այս տեսակ հայեր, ինչպես ազատ երկիրների ազատ քաղաքացիներ, կամավոր դարձան Կովկասյան ճակատում: Պետք է ասել, որ, այնուամենայնիվ, մեծամասնություն այդ խմբերի մեջ բաղկացած էր ռուսահայերից, այնպես որ 1000–1500-ից ավել չէին կարող լինել ամերիկահայ, բոլգարահայ, եգիպտահայ և ռուսինահայ կամավորները: Իսկ թուրք կառավարությունը, չգիտենք ինչ հիմունքով, շարունակ կրկնում է, թե նրանք թուրքահայատակ էին:

Թե դյուրագրգռությունն ինչ մանրության կարող է հասնել նույնիսկ պետական մարդկանց մեջ, ցույց է տալիս № 57 պատկեր-վավերագիրը, որ ներկայացնում է զինվորական շորեր հագած երեք երեխաների և որի տակ գրված է, թե դրանք նշանավոր հայերի երեխաներն են, որոնք այսպես հագնվել են կամավորներին քաջալերելու համար, որ նրանք կովեն Թուրքիայի դեմ:

Ամբողջ աշխարհը գիտե, որ ներկա մեծ պատերազմին համաշխարհային մոդա դարձավ նույնիսկ ծծկեր երեխաներին, անգամ աղջիկներին, զինվորական շորեր հագցնելը: Ջարմանալի է, որ թուրք կառավարությունը չէ ասում, որ ամբողջ աշխարհն էր դրանով քաջալերում երկու ու կես հայ կամավորներին թուրքերի դեմ:

«Ժողովրդի Չայն» 29. XI. 1918, № 72:

VI

Բայց ժամանակ է, որ մենք, վերջապես, որոնենք և գտնենք, թե ո՞ր է թուրքահայերի ապստամբությունը:

Ամենայն ուշադրությամբ հետևելով թուրք կառավարության երկարապատում տեսություններին, մենք, այնուամենայնիվ, չենք տեսնում այդ ապստամբությունը, որ գլխավորն է, որ վճռականն է: Ապստամբություն, իհարկե, այս հասկացողության ամբողջ ծավալով, որ պիտի ունենա հետևյալ հանգամանքները. ընդհանուր մասսայական խլրտում, որոշ ռազմագիտական և տակտիկական ձևավորում, որոշ նպատակ և կազմակերպչական միություն: Միայն այս դեպքում կարելի է խոսել տեղահանության անհրաժեշտության մասին:

Էնվեր փաշայի կառավարությունը դրա փոխարեն մեզ պատմում է, թե որտեղ որքան զենք, որքան ռումբ է գտել: Դնենք թե հենց ճիշտ են այդ տեղեկություններն ու թվանշանները: Բայց ո՞ր է նրանց գործածությունը, ե՞րբ է թուրք կառավարության դեմ ծառայել մի փոք-

րիշատե նշանավոր շարժում, որի զսպման համար նա հարկադրված լինելը զինվորական ուժ գործածել:

Այսպիսի փաստեր չկան: Միայն արևելյան ռազմաբեմին մոտիկ, Վանի վիլայեթում, թուրք կառավարությունը ցույց է տալիս 1915-ի փետրվարին հայ գյուղացիների ապստամբություն: Բայց այստեղ հիշատակենք, որ Ադանայի ջարդն էլ այս հրատարակության մեջ անվանված է «հայկական ապստամբություն» թեև ժամանակին Երիտասարդ Թուրքերը վկայում էին ամբողջ աշխարհի առջև, թե հայերը միանգամայն անմեղ զոհեր էին:

Եթե մոտիկուց նայենք Վանի վիլայեթի այս «ապստամբության» կտեսնենք միևնույն հանգամանքը: Կառավարությունն ասում է, թե հայերն անխնա կոտորեցին տեղական մուսուլմաններին (Խոջաբում և այլ գավառներում): Շարունակ այս «մուսուլման» անունն է կրկնվում: Մինչդեռ Վանի վիլայեթի մուսուլմաններն ունեն իրանց հատուկ և ավելի քաջածանոթ անունը – քուրդ: Եթե այս անունը չէ հիշատակված և ոչ ի տեղ, այս, անշուշտ, առանց նպատակի չէ: Գիտեն, որ եթե ասեն, թե հայերը կոտորեցին քրդերին, ամեն մեկը կիմանա, որ քրդերն այնպիսի մի գառնուկներ չեն, որ թողնեն իրանց կոտորել: Եվ, իրավ, 1915-ի ձմեռը, մինչդեռ ռուսները Սալմաստի կողմից արշավում էին դեպի Վան, քրդերը սրի քաշեցին Բաշ-Կալեյի և ուրիշ գյուղերի հայերին: Կարիք չկա ուրանալու, որ 1895–1896 տարիների կոտորածներից հետո հայը Թուրքիայում չէր ուզում այլևս ոչխարի նման մորթված լինել և ինքն էլ զենքով էր պատասխանում քրդին:

Ահա այս ինքնապաշտպանությունը, երբ նա հայկական է, «ապստամբություն» է թուրք կառավարության համար:

Մնում է մի փաստ միայն, որ կոմիտեական գրականության մեջ էլ, իրավ, կոչված է ապստամբություն — Վանը 1915-ի ապրիլին: Բայց այս փաստը կապ չունի հայերի ընդհանուր տեղահանության տոսկալի ծրագրի հետ, որ պատրաստված էր վաղուց, կարծեմ նույնիսկ պատերազմից առաջ և սկսեց գործադրվել ապրիլի 11-ից, երբ Վանում դեպքերը դեռ չէին էլ զարգացել: Ապացույց այն, որ թուրք կառավարությունը Համաձայնության երեք պետություններին տված իր պատասխանի մեջ չէ հիշատակում Վանի դեպքերը:

Եվ այսպես, տեղահանությունները, որոնք, ինչպես հաշվել են եվրոպացիները, մոտ 800 հազար հայերի կոտորած առաջացրին, հետևանք չէին հայերի մեջ որոշ արտահայտված կամ գործադրված ապստամբական տրամադրության: Այս կարող է բարձրաբարձր, նորից և նորից վկայել հայ ժողովուրդը աշխարհի առջև և ապացույց բերել նույնիսկ թուրք կառավարության հրատարակած այս ստվար հատորը:

Ապրիլի 11-ից հետո, մասնավորապես նույն 1915-ի ամառը, մի քանի տեղերում, այն էլ Թուրքաց Հայաստանի սահմաններից դուրս, տեղի են ունեցել հայկական շարժումներ, որոնք և մանրամասնաբար պատմված են գրքի մեջ: Այդ տեղերն են՝ Ուրֆա, Գարահիսարի - Շարքի (Շապին-Գարահիսարի), Ֆինտիջիկ և Յողդադ: Բայց սրանք «ապստամբություններ» չէին, այլ պարզապես հուսահատության ծայրին հասած ժողովրդի դիմադրական փորձեր:

Փաստերն իրանք են ցույց տալիս այդ «ապստամբությունների» իսկական պատկերը: Եվ ամենապերճախոս ապացույցն այն է, որ թուրք կառավարությունը չէ կարողանում առանց առասպելական թվերի խոսել: Այսպես, 238 երեսում նա այնքան լրջությամբ պատմում է, թե Սրվազի վիլայեթում, հայտնի հերոս Մուրադի և սրա երկու ընկերների հրամանի տակ, կային երեսուն հազար զինված ու վարժված հայեր, որոնք պիտի հարձակվեին թուրք բանակի վրա թիկունքից: Ասել է՝ հայկական մի ամբողջ բանակ, որ եթե երևակայության մեջ չլինեք գոյություն ստացած, անշուշտ, ահագին դժվարություններ պիտի հարուցած լինեք թուրքերի դեմ այնպիսի մի ժամանակ, երբ նրանց ամբողջ ուշադրությունը գրավել էր Դարդանեղի պաշտպանությունը: Բարեբախտաբար, առասպելը չափազանց պարզ ու խեղճ կերպով է հերյուրված: Ապացույց հենց այն, որ թուրք կառավարությունը չէ պատմում, թե պատերազմական ինչ գործողություններով նա ոչնչացրեց այս ապստամբական խոշոր բանակը: Կար բանակ և հանկարծ չկա ...

Երկար նկարագրված է Ուրֆայի հայերի «ապստամբությունը» կամ, ավելի ճիշտ, բնաջնջումը: Հալեպի վիլայեթի մի անկյուն ընկած, բուն Հայաստանից շատ հեռու ապրող մի փոքրաթիվ հայություն, որ ապրում էր բարեկեցիկ, շատ զարգացնելով մանավանդ դպրոցական գործը: Այս ապարեզում աշխատում էին և ամերիկացի միսիոներներ: Ուրֆան 2000 զոհ էր տվել 1895-ի կոտորածների ժամանակ: Այս անգամ էլ նրան չպիտի ինայեք թուրքական յաթաղանը:

Շատ խորիմաստ է թուրք կառավարության պատճառաբանությունը: Ռուսաստանը, – ասում է նա, – Թուրքիայի վերաբերմամբ իրագործելի երկու ծրագիր ունի. մեկն այն է, որ աշխատում է ձեռք գցել նեղուցները և երկրորդն այն, որ ուզում է Փոքր Ասիայի վրայով դուրս գալ Ալեքսանդրետի ծոցը: Ուրֆայի մի բուռն հայության դժբախտությունն էլ հենց այն է, որ այս քաղաքը գտնվում է Ալեքսանդրետի ճանապարհի վրա: Եվ ահա այդ հայությունը պիտի որպես թե ճանապարհ բանար թուս բանակի համար 1915-ի ամառը, երբ նույնիսկ դեռ էրզրումն էլ չէր առնված: Հեղափոխական կոմիտեները, քահանաները, եպիսկոպոսները, նույնիսկ միսիոներները ապստամբեցնում էին Ուրֆայի և նրա մոտ գտնված մի գյուղի հայերին, որ թուսները շուտ գան Ալեքսանդրետ գնալու համար: Սկսվում են պատերազմական գործողություններ: Թուրք զորքերը թնդանդոներով ուրակոծում են հայկական թաղը, մեծ դժվարություններով, ծանր զոհերով, ինչպես ասում է կառավարությունը, վերցնում են պաշարված թաղը:

Դարձյալ մի քանի վիճակագրական տեղեկություններ: Ուրֆայի հայոց թաղում, կառավարության ասելով, 500 տուն կա, ուրեմն ընդամենը ոչ ավել, քան 2500 հայ, հաշված երեխաներին, ծերերին և կանանց: Թող մի 200 տուն էլ ունենա քաղաքի մոտ եղած հայկական գյուղը: Կառավարության կատարած խուզարկությունները երևան են հանել Ուրֆայում 700 հրացան և չորս հազար փամփուշտ: Ահա այս զենքերով 3500 հոգիները, եթե կովոդ համարենք և կանանց ու երեխաներին, ուզեցին պատռել

մահմեդական այն ծովը, որ տարածվում է մինչև Միջերկրականի արևելքը և առաջնորդել ռուսական բանակը, որ, անշուշտ, մի 200 հազար հոգի կունենար իր մեջ:

Դժբախտ Ուրֆա:

Ի վերջո, հիշատակենք և մի հանգամանք: Գրքի վերջում դրված են մի քանի պատկերներ, որոնք ներկայացնում են հայերի կատարած զազանությունները: Առանց մի ընդհանուր տատանվելու մենք դատապարտում ենք այդ վայրենի արարքները, որոնցից մենք սոսկում ենք և զգվում: Մեր ցավը չափազանց մեծ է, որ հայությունը կարողանում է այդքան անզթություն, այդքան զազանային վայրենություն ցույց տալ: Բայց միևնույն ժամանակ մենք չգիտենք ինչ ասել, երբ այդ միևնույն հայը, պատասխանելով մեր այդ դատապարտության, ցույց է տալիս ո՛չ թե տասնյակ, ո՛չ թե հարյուր, այլ հազարավոր և հարյուր հազարավոր կոտորվածներ: Քաղաքակիրթ աշխարհը ծայրեծայր լիքն է այն սոսկումներով, որ պատճառել են Թուրքիայում կատարված կոտորածները: Հայերն այդ արյունոտ իրականության ամենամեծ զոհերն են: Նրանց ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ նրանք զազաններ չեն եղել երբեք: Եվ եթե այժմ զազանացել են, այս, կրկնում ենք, շատ մեծ ցավ է: Բայց հարցնենք՝ ինչի՞ց զազանացան նրանք, ո՞վ նրանց այդ զարհուրելի, ատելի և հավիտյան անիծյալ դատարարությունը տվեց:

Թուրք կառավարության հրատարակած այս հատորը շատ հետաքրքրական է իր բովանդակությամբ և մանավանդ իր մթերած վավերագրերով: Նա մի շատ թանկագին աղբյուր կդառնա պատմության համար: Կարևորն այն է, որ թուրք կառավարությունն ասել է ամեն ինչ, և այսուհետև հազիվ թե ուրիշ ասելիք ունենա:

Մնում է, որ այսուհետև պատմությունն արտասանե իր դատավճիռը թե թուրք կառավարության և թե հայ հեղափոխական կոմիտեների մասին:

Դատաստանի ժամը մոտիկ է: